Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • էլ. հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Հաղորդակցումը որպես բանավոր խոսքի զարգացման միջոց 3-րդ դասարանում
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Մելանյա Հովհաննիսյան Նուրիջանի Դասվար 094 78 34 34 hovahannisyanmelania@gmail.com Մայրենի, մաթեմատիկա, ես և շրջակա աշխարհը, կերպարվեստ, տեխնոլոգիա 1-4-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Կոտայքի մարզ, Ազատ Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, Կամարիս 8-րդ փողոց 14 094 41 18 01 kamaris@schools.am

Բովանդակություն

Ներածություն----------

---------- 3 3

1.Հաղորդակցումը որպես բանավոր խոսքի զարգացման միջոց---------- 4

2. Բանավոր խոսքի ուսուցման հիմնավորումն ըստ առարկայական չափորոշչի և ծրագրերի ---------- 7

3.Բանավոր խոսքի զարգացման առանձնահատկությունները տարրական դպրոցում---------- 10 4

Եզրակացություններ, առաջարկություններ---------- 20 5

Օգտագործված գրականության ցանկ---------- 21 6

7

Ներածություն

Երեխայի բանավոր խոսքի զարգացման ամենաարդյունավետ ձևը բնական հաղորդակցումն է: Դրա համար պետք է երեխայի համար ստեղծել բնական հաղորդակցության ձևեր: Երեխայի ցանկացած գործունեության ժամանակ պետք է քաջալերել երեխայի արտահայտվելու ցանկությունը, հնարավորություն տալ երեխային ազատ, անկաշկանդ խոսելու, քանի որ, որքան մեծ է երեխայի արտահայտվելու, խոսելու ցանկությունը, այնքան մեծ է նրա խոսքի հղկված լինելը:

Խոսքի զարգացման գործընթացում առանձնապես շեշտադրված է երեխաների հաղորդակցման լիիրավությունները, շրջապատի մարդկանց հետ հարաբերությունները կարգավորելու ունակությունը, հնչյունային մշակույթի զարգացումը ինչի կարիքն առանձնապես շատ ունեն ժամանակակից երեխաները:

Խոսքը՝ որպես հաղորդակցման միջոց, զարգացման, շրջապատող աշխարհի մասին երեխաների պատկերացումների ընդլայնման, բառապաշարի հարստացման համար պետք է ստեղծել երեխայի համար զարգացնող միջավայր, խրախուսել երեխայի հաղորդակցման փորձերը, ընդգրկել երեխային զրույցի, երկխոսության մեջ:

Խոսքի զարգացումը նախադպրոցական հաստատություններում կապված է բոլոր բաղադրիչների հետ, այսինքն՝ ցանկացած իրավիճակում գերակա խնդիրը երեխայի բանավոր խոսքի զարգացումն է, իսկ գրավոր խոսքը մանկապարտեզում երեխաները արտահայտում են միայն նկարչության միջոցով:

Ուսումնասիրվող նյութը ցույց է տալիս, որ երեխայի երկար ժամանակ մակապարտեզում գտնվելը բարենպաստ պայմաններ է ստեղծում նրա խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների համար:

Խոսքը երևան է գալիս մարդու՝ այլ մարդկանց հետ հաղորդակցվելու պահանջմունքից: Այդ պատճառով երեխայի ներառումը սոցիալական միջավայրի մեջ և նրա սոցիալական կապերի պլանավորված ընկալումը համարվում են նրա խոսքի զարգացման հիմնական պայմաններից մեկը, երեխաների բանավոր խոսքի զարգացումն իրականանում է գործունեության ընթացքում, և խոսքի զարգացման շարժիչ ուժը համարվում է հաղորդակցման անհրաժեշտությունը:

1.Հաղորդակցումը որպես բանավոր խոսքի զարգացման միջոց

Լեզուն ժողովրդի ֆիզիկական, հոգևոր, մտավոր կյանքի արտացոլումն է: Նա ներառում է ոչ միայն ժողովրդին շրջապատող բնությունը, նրա պատմությունը, կենցաղը, բարքերը, հավատալիքները, նրա հոգեբանությունը, հոգևոր, մշակութային արժեքները, այլ նաև նրա ձգտումները, ապագան: Լեզուն ժողովրդի լավագույն բնութագիրն է և ժողովրդի բնավորության մեջ ներթափանցելու լավագույն, գուցե և

միակ միջոցը, ինչքան խորանում ենք լեզվի մեջ, այնքան լավ ենք հասկանում այն կրող ժողովրդի բնավորությունը: Մայրենի լեզվի միջոցով երեխան հոգևոր ուժ և մտավոր կարողություն է ստանում, ճանաչում է ինքն իրեն:

Մայրենի լեզվի ուսուցման համար հիմնավոր ու ելակետային է համարվում, որ.

- լեզուն մարդկային հաղորդակցման, իրականության ճանաչման միջոց է, ժողովրդի ոգու, նրա աշխարհընկալման արտահայտություն.
- լեզվի միջոցով երեխան յուրացնում է սերունդների փորձը, մարդկային մշակույթը, հաղորդակցվում սեփական ժողովրդի ազգային մշակույթին.
- լեզուն՝ որպես հաղորդակցման միջոց, ձևավորում է մարդու հասկացությունների-կատեգորիաների ապարատը, զարգացնում է հիշողությունն ու մտածողությունը, այսինքն՝ լեզուն ապահովում է մարդու մտավոր զարգացումը.
- լեզվի զարգացման մակարդակը շատ բանով կախված է հասարակության՝ այդ լեզուն կրողների զարգացման մակարդակից, հասարակությունը պատասխանատու է մայրենի լեզվի վիճակի համար, պարտավոր է մտածել լեզվի մաքրության մասին.
- լեզուն կենդանի, զարգացող համակարգ է և անընդհատ փնտրում է մտքի, զգացմունքի, ապրումի արտահայտության համարժեք ձևեր:

Դպրոցը մայրենիի յուրացման ընթացքն ապահովող կարևոր օղակներից է, որտեղ լեզվի ուսուցումը նպատակաուղղված է՝

- մայրենի լեզվի անաղարտության և առաջնայնության պահպանմանը.
- սովորողի կողմից մայրենի լեզվով՝ բանավոր և գրավոր խոսքի միջոցով, սեփական մտքերը, հույզերն արտահայտելու, մարդկանց հետ հաղորդակցվելու, շրջապատող աշխարհը և մարդկանց հասկանալուն, բնության, հասարակության և մարդու մասին գիտելիքներ ստանալուն.
- սովորողների կողմից լեզուն որպես մշակութային արժեքի ընկալմանը, այն կրելու, պահպանելու ու տարածելու անհրաժեշտության գիտակցմանը.
- սեփական ստեղծագործական ունակությունները դրսևորելու և զարգացնելու, ինքնակրթության, ինքնադաստիարակության, ինքնակատարելագործման մղելուն:[3, 62-66]

Ուսուցման խնդիրները

Հիմնական դպրոցում մայրենի լեզվի ուսուցման խնդիրներն են՝

- գրավոր ու բանավոր ճիշտ խոսքի և հստակ արտահայտման անհրաժեշտ հմտությունների մշակում.
- սովորողի խոսքային ինքնարտահայտման պահանջմունքի պահպանում ու զորացում. մեդիահմտությունների անընդհատ զարգացման միջոցով խոսքի, ստեղծագործական

մտահղացումների հրապարակայնացում, հանրայնացում (բլոգի, կայքի, սոցցանցի և վիրտուալ այլ միջոցներով).

- վերլուծական ու նկարագրական հմտությունների, ստեղծագործական, քննադատական մտածողության զարգացում.
- լեզվաբանական գիտելիքների յուրացման և լեզվական նյութի միջոցով՝ սովորողների ընդհանուր կրթական հայացքների շրջանակի ընդարձակում.
- համացանցային տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու կարողություն, բառարաններից և տեղեկատու աղբյուրներից օգտվելու հմտության զարգացում:

Ուսումնական բնագավառը ներկայացված է հետևյալ դասընթացներով՝

- 1-3-րդ դասարաններում՝ «Մայրենի լեզու՝ որպես «Իմացումի հրճվանք» ծրագրի բաղկացուցիչ (480 ժամ)
- 4-6-րդ դասարաններում՝ «Մայրենի լեզու» (530 ժամ),
- 7-9-րդ դասարաններում «Հայոց լեզու» (318 ժամ), «Գրականություն» (212 ժամ),
- 4-9-րդ դասարաններում՝ սովորողների ընտրությամբ մեդիալրագրություն դասընթաց, ««Սեբաստացիներ» ռադիո» ակումբ.
- 4-9-րդ դասարաներում՝ սովորողի ընտրությամբ տնային աշխատանքի՝ որպես լրացուցիչ կրթության նախագծեր:

Ուսուցման միջավայրը

Նյութական միջավայրը՝

- ուսումնական կաբինետ-ընթերցասրահ՝ անխափան անլար ինտերնետ կապով, ձայնային ուժեղարարով, դասավանդողի, սովորողների անհատական համակարգիչ, տեսագրող, ձայնագրող, լուսանկարող թվային միջոցներ.
- ուսումնական անհատական թվային միջոցներ (պլանշետ, նեթբուք, նոթբուք), ֆոտոխցիկ, ձայնագրիչ.
- դպրոցի, կրթահամալիրի այլ ուսումնական տարածքները, այդ թվում՝ բակը.
- քաղաքը՝ թանգարան, ցուցասրահ, համերգասրահ, թատրոն, կինոթատրոն, մշակութային այլ կենտրոն, հուշարձան, փողոց, այգի.
- հանրապետության գյուղ, քաղաք, տեսարժան վայր, ճարտարապետական կոթող, պատմության, բնության հուշարձան:

Ուսուցիչը կարևորում է կազմակերպված ու ճիշտ խոսքը, սովորեցնում իր խոսքը դիմացինի նկատմամբ վերաբերմունքի չափանիշ համարել: Սովորողը սկսում է տեսնել իր խոսքի մի (մանավանդ՝ վերջնական)

տարբերակի առավելությունը մյուսներից: Նա այսպես նախ մշակում է սեփական ոճի տարրերը, հետո՝ գրավոր և բանավոր արտահայտվելու իր ոճը, յուրացնում խոսքային վարքի կուլտուրան՝ սովորում է ըստ անհրաժեշտության խոսել, լսել, արձագանքել, մասնակցել քննարկումների, բանավիճել:

Լեզվական նյութը (տարբեր ոճի, ժանրի, տիպի տեքստերը, որ գործածվում են ուսուցման ընթացքում) անմիջականորեն ուղղված է լեզվի յուրացմանը՝ և՛ գիտակցված, և՛ ոչ գիտակցված մակարդակով: Բացի կոնկրետ առաջադրանքը կատարելուց, սովորողը նյութից ակամա վերցնում է լեզվական կառույցներ ու կաղապարներ, սեփականում բառեր ու արտահայտություններ:

Լեզվական նյութի, կատարված լեզվական աշխատանքի ու զանազան շարադրությունների քննարկումները, զրույցներն ու բանավեճերն օգնում են, որ սովորողը մտքերը զրուցակցի համար հասկանալի ու փաստարկված շարադրել, լսել, տրամաբանված խոսել սովորի:[4, 45-50]

2. Բանավոր խոսքի ուսուցման հիմնավորումն ըստ առարկայական չափորոշչի և ծրագրերի

Հանրակրթական պետական չափորոշչի հիման վրա կազմվել են հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության առարկայական չափորոշիչը և ծրագրերը: Առարկայական չափորոշիչը հիմք է ծառայում հայոց լեզվի և գրականության ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների ուսումնական բառարանների և այլ օժանդակ նյութերի ստեղծման համար: Դպրոցական բոլոր առարկաների, հատկապես հայոց լեզվի և գրականության ուսուցման հիմնական նպատակն է զարգացնել սովորողների լեզվագործածական ունակությունները՝ գրագետ խոսք կառուցելու և հաղորդակցվելու համար: Մայրենի լեզուն միաժամանակ հանդես է գալիս և՛ որպես ուսումնասիրության առարկա, և՛ որպես մյուս առարկաների յուրացման միջոց: Մայրենի լեզվի կարևորագույն առանձնահատկություններից է այն, որ նա ներառում է երկու կողմ՝ բուն լեզվի իմացության, այսինքն՝ այդ լեզվով հաղորդակցվելու, տարբեր բնույթի գրավոր ու բանավոր շարադրանք ստեղծելու կարողություն և լեզվի ֆերականական կառուցվածքի իմացություն, որը ենթադրում է տեսական լեզվական գիտելիքների առկայությունը:

Տարրական դասարաններում մայրենի լեզվի ուսուցումը հիմնականում կազմակերպվում է գործնական ճանապարհով, որի կիրառությունը ապահովելու համար անհրաժեշտ է, որ լեզվական նյութի՝ ուղղախոսական, ուղղագրական, ֆերականական գիտելիքների հաղորդմանը զուգահեռներ կայացնեն նաև հատուկ տիպի բնագրեր, խոսքի օրինակելի նմուշներ, գործնական բնույթի վարժություններ և հանձնարարություններ, որոնք պետք է զարգացնեն տարաբնույթ խոսքային իրադրություններում սովորողների հաղորդակցական կարողությունները, տարբեր թեմաների շուրջ ինքնուրույն գրավոր և բանավոր խոսք կառուցելու հմտությունները, լեզվաֆերականորեն ճիշտ ձևավորումով մտքերը, հույզերը, զգացմունքները ճիշտ արտահայտելու ունակությունները:

Լեզվական տարբեր իրողություններ ուսումնասիրելու համար նյութ է ծառայում տեքստը, որի մեջ են դրսևորվում լեզվական տարբեր մակարդակների միավորները, դրանց բնորոշ առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Լեզվի ուսուցման այս մոտեցումը հնարավոր է դարձնում ցույց տալ, թե լեզվական յուրաքանչյուր միավոր ինչպես է ամբողջ իմաստ դառնում, մասնակցում խոսքակազմությանը:[4, 70-77]

Այսպիսով, մայրենի լեզվի ուսուցումը ծառայում է հաղորդակցական հիմնական նպատակին՝ կապակցված խոսք կազմելուն: Լեզվի գործնական ուսուցման նպատակադրումը պահանջ է ներկայացնում ուսուցման բովանդակության մեջ առանձնահատուկ տեղ տալու բառին ու նրա իմաստին, ճիշտ բառօգտագործմանը, բառերի իմաստային և ֆերականական կապակցելիությանը, բառերի փոխաբերական կիրառությանը, նախադասությունների կառուցման մեջ բառերի և բառաձևերի դերին: Քերականության ուսուցման ժամանակ կարևորը ոչ թե սահմանումներն անգիր անելն է, այլ դրանց ճիշտ օգտագործումը խոսքում: Շատ կարևոր պահանջ է լեզվագործածության ուսուցումը՝ հաղորդակցման տարբեր պայմաններում, որտեղ առաջնահերթ նշանակություն ունեն ուսումնական գործունեության ձևերը, որոնք պետք է հնարավորություն տան զարգացնելու սովորողների խոսքային կարողությունները՝ կախված տվյալ իրադրությունից, խոսողի նպատակից, ունկնդիրների առանձնահատկություններից և այլ հանգամանքներից:

Սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացման համար կարևոր նշանակություն ունեն դասագրքերում ընդգրկված տեքստերի բնույթը, տեքստային աշխատանքի ձևերի և հարակից առաջադրանքների ու վարժությունների տեսակները: Տարրական դպրոցում և հիմնական դպրոցի 3-4-րդ դասարանների դասագրքերում ընթերցանության նյութերը պետք է ընտրվեն թեմատիկ և լեզվաոճական բազմազանության սկզբունքով, իսկ առաջադրանքներն ու վարժությունները պետք է ուղղված լինեն ինքնուրույն աշխատելու հմտությունների ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը և ոչ միայն մեխանիկական մտապահմանն ու վերարտադրմանը: Միաժամանակ, դրանք պետք է պարունակեն աշխարհաճանաչողական գիտելիքներ և նպաստեն ձևավորելու սովորողների արժեքային համակարգը, որոնք դպրոցական կրթության կարևոր բաղադրիչներն են

Մայրենի լեզվի ծրագիրը ընդհանուր առմամբ ներկայացվում է աղյուսակի տեսքով, որի երեք սյունակները համապատասխանաբար արտացոլում են ուսուցանվող նյութը, ուսումնական նպատակը և ուսումնական գործունեության տեսակները: Այս կառուցվածքն ընտրված է որպես լրացուցիչ մեթոդական օգնություն, թեև այն չի փոխարինում առանձին մեթոդական ուղեցույցներին, որոնք կազմվում են չափորոշչի և ծրագրի հիման վրա: Աղյուսակի երկու սյունակները համաչափ կառուցվածք ունեն (ուսուցանվող նյութը, ուսումնական նպատակը), իսկ գործունեության տեսակները նշվում են միայն ամենաընդհանուր ձևով և չեն արտացոլում ուսումնական նյութի յուրաքանչյուր կետը, քանի որ ուսուցիչներին հնարավորություն է տրվում ընտրելու ուսումնական գործունեության բազմաթիվ ձևեր՝ չսահմանափակվելով նշվածներով:

Առարկայական չափորոշչում յուրաքանչյուր դասարանների համար նշված են գիտելիքների, կարողությունների և հմտությունների չափերը, որոնցով պետք է զինվեն 1-4-րդ դասարաններն ավարտած աշակերտները:

Ըստ առարկայական չափորոշչի՝ առաջին դասարանի մայրենի լեզվի գրաճանաչության փուլի նախաայբբենական շրջանի ավարտին աշակերտները պետք է ընդհանուր պատկերացում ունենան բանավոր խոսքի, պատմության /նկար-պատմություն/ մասին: Այբբենական շրջանի ավարտին աշակերտները պետք է գաղափար ունենան հայերենի հնչյունների, դրանց գրության մասին: Հետայբբենական շրջանի ավարտին աշակերտները պետք է կարողանան համապատասխան աշխատանքների կատարման միջոցով ամրակայել խոսքի, բառի, նախադասության և տեքստի ընթերցման և գրելու կարողությունները:

Իսկ ընթերցանության փուլում աշակերտների մոտ պետք է զարգացած լինեն կարդալու կարողությունները, կարողանան հասկանալ կարդացածը և աշխատանք կատարեն տեքստի շուրջ, զարգացած լինի խոսքը, խոսքի արտահայտչական բազմազան ձևերը և դրանց արտահայտման եղանակները, գաղափար ունենան լեզվական տարրական գիտելիքների մասին, ունկնդրեն գեղարվեստական գրականություն՝ խոսքը գրագետ կառուցելու համար (տվյալ տարիքային առանձնահատկություններին համապատասխան):

Այսպիսով՝ ըստ առարկայական չափորոշչի՝ տարրական դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է կարողանա հայերենով հաղորդակցվել մեծահասակների, հասակակիցների և փոքրերի հետ, ընկալել ուրիշների խոսքը և արտահայտել սեփական մտքերը, կարդալ և հասկանալ գրավոր պարզ տեքստեր, բանավոր և գրավոր շարադրել պարզ տեքստեր:[1, 40-45]

3.Բանավոր խոսքի զարգացման առանձնահատկությունները տարրական դպրոցում

Դպրոցում մայրենի լեզվի ուսուցման հիմնական նպատակը խոսքային հմտությունների ձևավորումը, մշակումն ու կատարելագործումն է, խոսք կառուցել սովորեցնելը, այլ կերպ ասած՝ կապակցված խոսքի զարգացումը:

Խոսքի զարգացումը, որպես հիմնական պահանջ, դեռևս 60-ական թվականների սկզբից իր որոշակի արտահայտությունն է գտել տարրական դասարանների մայրենի լեզվի ծրագրի բոլոր բաժիններում. «Գրաճանաչության ուսուցում և խոսքի զարգացում», «Կարդալ և խոսքի զարգացում», «Քերականություն, ուղղագրություն և խոսքի զարգացում»: Դասագրքերը ևս կառուցվել են այդ սկզբունքների հիման վրա: Կապակցված խոսքը ոչ միայն ուսուցման նպատակ է, այլև մայրենի լեզվի ուսուցման ընթացքում լայն հնարավորություն է տալիս ապահովելու տեսականի ու գործնականի կապը և լեզվական- քերականական գիտելիքներն ստեղծագործաբար կիրառելու օգտակար միջոց է: Լեզվական-քերականական օրինաչափությունների գործնական, գիտակցական յուրացումն այն հիմքն է, որի վրա պետք է հենվի սովորողների խոսք կառուցելու կարողությունների ձևավորումը, մշակումն ու կլատարելագործումը:

Բանավոր խոսքը հանդես է եկել գրավոր խոսքից առաջ՝ որպես հաղորդակցման անմիջական պահանջմունք: Բանավոր խոսքն իր արտահայտչականությամբ ու հուզականությամբ ավելի բնական, կենդանի, տպավորիչ ու ազդեցիկ է, քան գրավոր խոսքը, որը ,հիշտ է, ավելի մշակված, հղկված ու կատարյալ է, սակայն ինչպես որոշ մեթոդիստներ են ասում՝ մի տեսակ «արհեստական, ձեռքբերովի լեզու է», և մարդը դրան տիրապետում է մեծ ջանքերի, հետևողական աշխատանքի շնորհիվ: Բանավոր խոսքի զարգացումը ելակետային նշանակություն ունի նաև խոսքի ու մտածողության դրսևորման մյուս ձևերի՝ գրավոր ու ներքին խոսքի մշակման ու կատարելագործման համար: Դրա համար էլ տարրական դասարաններում բանավոր խոսքի մշակման ու կատարելագործման աշխատանքներին մեծ տեղ է տրված:

Խոսելով մայրենի լեզվի ուսուցման մասին՝ Ուշինսկին նշում է երեք հիմնական նպատակ, որոնց պետք է հասնել ոչ թե աստիճանաբար, մեկը մյուսի հետևից, այլ միաժամանակ, որովհետև դրանք անխզելիորեն փոխկապակցված են միմյանց հետ, փոխադարձորեն ներթափանցված են միմյանց մեջ, մեկի յուրացումը օգնում է հասնելու նաև մյուսի յուրացմանը: Տարրական դասարանների աշակերտների բանավոր խոսքին առաջադրվում են որոշակի պահանջներ, որոնց պահպանումը պարտադիր է բոլոր աշակերտների համար՝ տարբեր դասարաններում կատարելության կամ որակական տարբեր աստիճաններով: Բանավոր խոսքում կարևորվում են ուղղախոսությունն ու տարաբնույթ լեզվաարտահայտչական միջոցների առկայությունը: Կապակցված խոսքին ներկայացվող պահանջների թվի են դասվում՝ խոսքի մաքրությունը, ճշգրտությունն ու կանոնավորությունը, պարզությունը, կապակցվածությունը, բովանդակալից լինելը և արտահայտչականությունը:

Սովորողների բանավոր խոսքի զարգացման գործում մեծ դեր ունեն նաև բանավոր խոսքի զարգացման սկզբունքները:[4, 60-68]

Սովորել կյանքից սովորել կյանքի համար. «Սովորել կյանքից, սովորեցնել կյանքի համար» ոսկե կանոնները հարկ է, որ դառնան մայրենի լեզվի ուսուցիչների մշտական ուղեկիցը դասավանդման ընթացքում, գննականության սկզբունք, գիտակցականության և ակտիվության սկզբունք.լեզվառճական վերլուծության սկզբունք, բովանդակային վերլուծության սկզբունք, տեքստի անհատական ընկալումը խթանող սկզբունք, զարգացնող կամ դաստիարակող սկզբունք, ուղղվածության, գիտականության, մատչելիության և այլ սկզբունքներ:

Հանրակրթական դպրոցում սովորողների խոսքի զարգացումն իրականացվում է փոխկապված և փոխպայմանավորված երեք հիմնական ուղղությամբ՝ բառապաշարի հարստացում, մայրենի լեզվի օրինաչափությունների, նրա բերականության յուրացում և կապակցված խոսք կառուցելու կարողությունների և հմտությունների մշակում:

Աշակերտների բառապաշարի հարստացումը միջնակարգ դպրոցում ունի ճանաչողական մեծ նշանակություն, քանի որ օբյեկտիվ աշխարհի իրերն ու երևույթները մեր գիտակցության սեփականությունն են դառնում բառերի միջոցով: Բառերը, նշում է պրոֆեսոր Է. Աղայանը, իրենց հնչյունական կազմով ու իմաստով մեր գիտակցության մեջ հանդես են գալիս իբրև այդ օբյեկտիվ իրականության առարկաների ու երևույթների փոխարինողներ: Իսկ բառապաշարի հարստացումը հաջող կազմակերպելու համար ուսուցիչն առաջին հերթին պետք է բացատրի բառի նշանակությունը: Սովորողները պետք է իմանան, որ բառը ինքնուրույն միավոր է և իր հնչյունական կազմով ու իմաստով հիմնականում մատնանշում է օբյեկտիվ իրականության այս կամ այն առարկան ու երևույթը: Է. Աղայանը այսպես է բնութագրում բառի բովանդակությունը. «Բառիմաստն այն ընդհանուր հասկացությունն է, որ հասարակական գիտակցմամբ ու արժեքավորմամբ պարունակում է բառը: Առարկայական վերաբերությունն այն կոնկրետ նշանակությունն է, որ ունի տվյալ խոսքի մեջ, տվյալ գործածությամբ: Նոր բառեր ուսուցանելիս ցանկալի է, որ ուսուցիչը գործադրի զննական տարբեր պարագաներ /նկարներ, պաստառներ.../, որովհետև փորձով ապացուցված է, որ հոգեբանական տեսակետից բառն ավելի խորն է տպավորվում ու մտապահվում այն դեպքում, երբ առարկան կամ նրա պատկերը տեսնելն ու բառը լսելը կատարվում են միաժամանակ: Բառը և նրա իմաստը ավելի լավ են յուրացվում և ամրապնդվում, երբ աշակերտների մեջ ստեղծվում են տեսողական, լսողական ու շարժողական մտապատկերները:[5, 25-30]

Նպատակը եւ հետազոտական հարցը	Ուսումնասիրության նպատակն է հաղորդակցման բարելավման ուղիները 3-րդ դասարանում: Հարց: Ինչպե՞ս է հաղորդակցումը նպաստում 3-րդ դասարանում:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակության ն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	լեզվական գրագիտություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	3-րդ դասարան Տղա՝ 10 Աղջիկ՝ 13

Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ բանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	Սեպտեմբեր 2023 թ.

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: <u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>	Ընթերցանության ծավալուն նյութ (վիպակ, վեպ, ժողովածու), դրանց քննարկման նախագծերի կազմակերպում և մասնակցություն, ամսագրերի, հաղորդումների, ուսումնական այլ նախագծերի մշակում և կազմակերպում: Լեզվաբանական խնդիրներ, թարգմանության և խոսքի մշակման աշխատանք, 4-րդ դասարանում՝ նաև ավարտական քննության նախապատրաստական աշխատանք, բերականական, գրական գիտելիքների ստուգում: [1, 35-38]
Հետազոտության ընթացքը	Հետազոտական աշխատանք Դասարան՝3-րդ Առարկան՝ Մայրենի Դասագիրք՝ <<Մայրենի 3>>, հեղինակներ Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան Դասի տեսակը՝ Համակցված Դասի կահավորումը՝ սահիկներ, նկարներ (Ատարատ լեռ, հասկ, գինվոր, արծիվ, աշուղ, Սիլվա Կապուտիկյան, Ցուրի Սահակյան, ազգային հերոսներ,) Դասին կիրառվող մեթոդներ՝ մտագրոհ, բառաբաժան

Հին թեմա՝<<Լեռները հպարտ>>
Նեղ թեմա
Նոր թեմա՝ << Փառքի հերոսներ>>
Դասի նպատակները և խնդիրները՝ Զրույց Արարատ լեռան և մյուս հայկական լեռների մասին: Արտահայտիչ կարդալու, կապակցված խոսք կառուցելու, կարծիքներն ու մտքերը ազատ արտահայտելու սովորողների կարողությունների ձևավորում:
Աշակերտների բառապաշարի հարստացում:
Աշակերտների մոտ ձևավորել բարեսրտություն, հոգատարություն, համբերատարություն, հարգանք միմյանց հանդեպ, միմյանց սատար կանգնելու կարողություն:
Բնագիրը՝ որակական հատկանիշների պահպանմամբ աշակերտնելու կարդալու կարողության զարգացում՝ հատկապես վարժ կամ սահուն կարդալու կարողության զարգացում:
Դասի ընթացքը
Կազմակերպական պահ՝ Ողջույնի խոսք: Տնային առաջադրանքների ստուգում, հին դասի հարցում:

Դասը վարել ԽԻԿ համակարգով:
Խթանման փուլ:
Դասանյութի գաղափարի վերհիշում:
Հին դասի հարցում՝ Խոսել Հայրենիքի մասին, մեր լեռների մասին և հայրենասիրության մասին:
Հիշենք Սիլվա Կապուտիկյանի <<Պատգամ>> բանաստեղծության հետևյալ տողերը՝
Ու տես որդիս, ուր էլ լինես,
Այս լուսնի տակ ուր էլ գնաս,
Թե մորդ անգամ մտքից հանես,
Քո Մայր լեզուն չմոռանա՛ս...
Ս. Կապուտիկյան
Հայրենիք ասելով հասկանում ենք՝ մեր լեռները, հայոց բանակը, մաք աղբյուրները, ցորենի հասկը, աշուղները, հպարտ արծիվները և այլն:
Այժմ բացում ենք դասագրքի 129 էջը և կարդում ենք դասը, միմյանց շարունակելով:
Լեռները հպարտ վե՞ր են բարձրանում,
Որ փառքդ վերև՞ տանեն, հայրենի՛ք.
Արծիվները վես երկինք են հասնում,

Որ փառդ երկի՛նք տանեն, հայրենի՛ք.
Հովերն ու հողմերն աշխա՜ր են շրջում,
Որ փառդ չորս կողմ տանեն, հայրենի՛ք.
Աղբյուր ու գուսան է՜լ գ են կարկաչում,
Որ փառքդ գովքը անեն, հայրենի՛ք.
Իսկ զավակնե՜ր դ, զավակներդ անգին
Իրենց արյու՜ն են տալիս սրտագին,
Որ փառդ անմա՜հ պահեն, հայրենիք...

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Երեխաներին տալիս ենք երկու հարց և ինքարկում նրանց հետ այդ հարցերի շուրջ.

1. Ձեր կարծիքով ի՞նչպես կարելի է անմահ պահել հայրենիքի փառքը:
2. Դուք ի՞նչ կանեք հայրենիքի համար:

Նոր նյութի հաղորդում

Իմաստի ընկալման փուլ՝ Յու Սահակյան, <<Փառքի հերոսներ>>

Զրույց վարել Յուրի Սահակյանի մասին և աշակերտներին տալ մի փոքր տեղեկություն նրա կենսագրականից:

Յուրի Սահակյանը 2017թ. արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալի, իսկ 2018թ. շնորհվել է Արցախի Հանրապետության մշակույթի և արվեստի վաստակավոր գործչի կոչմանը:

Յու. Սահակյան



Խոսում ենք ազգային հերոսների մասին: Ազգային հերոսներից շատերն անգամ Հայաստանի բաղաքացիներ չեն, բայց նրանց ներդրումը մեծ է եղել Հայաստանի Հանրապետության կայացման գործում:

Ազգային հերոսներ

Փառքի հերոսներ



Արցախյան հերոսներ 1988թ. փետրվար

Ապրիլյան հերոսներ 2006թ. ապրիլ

Արցախյան շարժումը սկսվել է 1988թ. փետրվարին, և մեր հերոսները իրենց կյանքը զոհաբերել են հանուն

հայրենիքի: Մեր հերոսներից փորձենք առանձնացնենք Մոնթե Մելքոնյանին, ինչո՞ւ, քանի որ նա չէր ծնվել Հայաստանում, չէր ապրում Հայաստանում, բայց իր պարտքն էր համարում այդ օրերին վերադառնալ հայրենիք և պաշպանել հայրենիքի սահմանները և այդպես էլ արեց հենց հայրենիքում նա զոհվեց:
Մյուս նկարում Ապրիլյան պատերազմի հերոսներն են, մերօրյա հերոսները, կոչվում է Ապրիլյան պատերազմ, նաև ասում ենք Քառորյա պատերազմ, քանի որ այն տևեց չորս օր: Քառորյա պատերազմը մեծ հետք թողեց բոլորի սրտերում: Շնորհակալ ենք այս տղաներին իրենց սխրագործությունների համար:
Այժմ բացում ենք <<Փառքի հերոսներ>> բանաստեղծությունը և միասին ընթերցում:
Հայոց լեռներին սատար են միշտ էլ
Լեռները հայոց:
Փա՜ռք մեր լեռներին:
Հայոց քաջերին նեցուկ են միշտ էլ
Քաջերը հայոց:
Փառք մեր քաջերին:
Փառք բոլոր նրանց, ովքեր կռվել են
Հնուց մինչ այսօր,
Մինչև մերօրյա Ավարայրը այս,
Շարժումն այս հզոր...
Փա՜ռք հայոց մտքին,
Հայոց հավատին
Ու բազկին հայոց:
Փա՜ռք, փա՜ռք, փա՜ռք:

ՅՈՒՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ
Իմաստի ընկալման փուլ՝ Նոր նյութի ամբողջական ընթերցում:
Ընթերցել շարունակելով :
ՈՒղղորդված ընթերցանություն մեկնաբանելով:
Կատարել մտքերի փոխանակություն՝
Ֆիզկուլտ դադար՝ կատարել մարմնի մարզում:
Կշռադատման փուլ ՝ Քառաբաժան մեթոդական հնար

Ի՞նչ էի տեսնում
Ի՞նչ էի զգում

Ի՞նչ ձայներ էի լսում	

Ամփոփենք բանաստեղծությունները ասույթների միջոցով:
Դժբախտ է այն երկիրը, որ հերոսներ չունի:
Հայրենասիրությունն ապահովվում է ոչ թե խոսքով, այլ գործով:
Ով չի սիրում իր երկիրը, ոչինիչ չի կարող սիրել:
Այժմ բացում ենք բառատետրերը և գրում հետևյալ բառերի բացատրությունները՝
փառք – լավ գործով ձեռք բերված անուն, հռչակ
վսեմ – վեհ, հպարտ
գուսան – ժողովրդական երգիչ, որ երգեր է գրում և կատարում դրանք. աշուղ
գովք – գովեստի խոսք, գովասանք
սրտագին – ամբողջ սրտով
երեխա – որդի, զավակ
քամի – հով, հողմ
սատար – մեկին օգնող ուժ կամ մարդ, մեկի գործին նպաստող
նեցուկ – հենարան, օգնող, պահող, պաշտպանող
քաջ – հմուտ և խիզախորեն կռվող, կտրիճ, խիզախ
կռվել – կռիվ անել, իրար ծեծել, պատերազմել, մարտնչել
հզոր – ֆիզիկական մեծ ուժ ունեցող, վիթխարի և ուժեղ, զորեղ:
Տնային առաջադրանքների հանձնարարում՝ <<Փառքի հերոսներ>> բանաստեղծությունը վարժ կարդալ: Գրել ածանցավոր բառեր ան – նախածանցով, օրինակ՝ անմահ, անգին, անտուն, նկարգ և այլն:

Եզրակացություններ, առաջարկություններ

Տարրական դպրոցում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսուցիչների համար նախատեսված մի շարք մեթոդական ձեռնարկներում, ուղեցույցներում նշվում են աշակերտների և՛ բանավոր, և՛գրավոր խոսքի զարգացմանը նպաստող տարաբնույթ աշխատանքներ, մեթոդական հնարներ, որոնց հաճախակի կիրառման դեպքում տվյալ դասարանում կպահպանվի բանավոր խոսքի լիարժեք օգտագործումը և զարգացումը:

Ստեղծագործական մեթոդներից են՝ ամփոփիչ զրույցները, ընթերցածի ստեղծագործաբար վերարտադրումը, բնագրի ձևափոխված պատմություններ և այլն

Սովորողների բանավոր խոսքի զարգացման համար մեծ դեր ունեն հետևյալ մեթոդները և հնարները. Դեդուկտիվ, ինդուկտիվ, դերայինխաղ, բանավեճեր, հարցազրույցներ, փոքր խմբերով աշխատանք, մտագրոհի հինգ րոպեանոց ազատ շարադրանքը (10-րոպեանոց ազատ շարադրանք), երկու աստղիկ, կենսագրական բանաստեղծություն, քառաբաժանը, վենի գծապատկերը

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Տարրական դասարաններում կիրառվում են նաև վերարտադրողական և ստեղծագործական մեթոդները: Վերարտադրողական մեթոդներից են նկարների դիտումները և դրանց բովանդակության վերարտադրումը, գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցումը և պատմումը, և այլն: Ստեղծագործական մեթոդները նպաստում են կապակցված խոսքային արտահայտություններ կառուցելու կարողության ձևավորմանը. Աշակերտը ոչ թե վերարտադրում է իրեն հայտնի լեզվական միավորները, այլ ստեղծում է նոր համակցումներ՝ առաջնորդվելով հաղորդակցման իրադրության պահանջներով, առանձնահատկություններով:

Այլ տեղեկատվություն	Սովորողի տեքստն է (գրավոր և առդիր), որի սրբագրման-խմբագրման միջոցով սովորողը նաև յուրացնում է լեզվական գիտելիքներ, գործնական բերականական վարժություններ՝ կրթահամալիրում ստեղծված ուսումնական ձեռնարկներից, լեզվաբանական խնդիրներ:

Օգտագործված գրականության ցանկ

1.Աբրահամյան Ս.,Հայոց լեզու. բառ և խոսք, Եր., «Լույս», 2008:

2.Ազիզյան Բ., Բառապաշարի հարստացման և բառուսուցման իմ փորձից, Եր., «Լույս», 2002:

3.Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., «Զանգակ», 2006:

4.Գյուլամիրյան Ջ., Խոսքի զարգացում, Եր., «Զանգակ», 2004:

5.Գյուրջինյան Դ. և ուրիշներ, Ուսուցչի ձեռնարկ. Մայրենի 5-6, Եր., «Էդիթ Պրինտ», 2012:

6.Թորոսյան Կ. և ուրիշներ, «Մայրենի 3, 4».Ուսուցչի ձեռնարկ, Եր. 2008:

Մակմիլան-Արմենիա, 2009:

Հաշվետվության կցված նյութեր • Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) • Նկարներ • Արդյունքներ	